

## **Վիրտուալ քարտի տրամադրման և օգտագործման կանոններ**

### **1. Ընդհանուր դրույթներ**

**Բանկ** – «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

**Վիրտուալ քարտ /հաշիվ/** – Բանկում բացվող VISA միջազգային վճարային համակարգի վիրտուալ հաշիվ, որով կատարվում են գումարների ելքագրում կամ մուտքագրում: **Վիրտուալ քարտով /հաշվով/ կանխիկացում չի թույլատրվում:**

**Յավելյալ վիրտուալ քարտ/հավելյալ հաշիվ** – Յավելյալ հաշվետիրոջը տրամադրված VISA վիրտուալ քարտ:

**Պայմանագիր** – Վիզա վիրտուալ հաշվի /վիրտուալ քարտի/ տրամադրման և օգտագործման պայմանագիր:

**Յաշվետեր** – Բանկի հետ կնքված Պայմանագրի հիման վրա Վիրտուալ քարտն օգտագործելու իրավունք ունեցող անձ:

**Յավելյալ հաշվետեր**-Յաշվետիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա Յավելյալ վիրտուալ քարտ ստացած անձ:

**Վարկային սահմանաչափ** – Բանկի կողմից Յաշվետիրոջը տրամադրված վարկային գիծ /համաձայն կնքվող առանձին պայմանագրի/, որը կարող է օգտագործվել հաշվով կատարված գործառնությունների համար:

**Վճարային սահմանաչափ** – Յաշվի մնացորդի և Վարկային սահմանաչափի հանրագումար, որից Յաշվետերը կարող է օգտվել:

**Գործառնություններ/Գործարք** Վիրտուալ քարտով գործառնություններ, որոնցում Վիրտուալ քարտն օգտագործվում է ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար:

**Գործառնության/Գործարքի կատարման օր** – Վիրտուալ քարտով գործառնությունը կատարելու փաստացի օր:

**Գործառնության/Գործարքի հաշվառման օր** – Վիզա միջազգային վճարահաշվարկային համակարգի կողմից գործարքը Բանկի հաշվառմանը ներկայացնելու հիմքով՝ Բանկում Յաշվետիրոջ հաշվով գործարքը հաշվառելու օր:

**Գերածախս**-Յաշվետիրոջ կողմից Վճարային սահմանաչափից ավելի ծախսված գումարը և դրա նկատմամբ հաշվարկված տուժանքը:

**Քարտի բլոկավորում** - քարտի առցանց /online/ հավաստագրման դադարեցում/արգելափակում,

**Քարտային հաշվի սառեցում** – քարտային հաշվով դեբետային/կրեդիտային գործառնություններ արգելափակում:

### **2. Վիրտուալ քարտի տրամադրման պայմանները և գործողության ժամկետը**

2.1.Վիրտուալ քարտը գործում է մինչև Վիրտուալ քարտի ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

2.2. Վիրտուալ քարտը Հաշվետիրոջը տրամադրվում է Պայմանագրով սահմանված կարգով:

2.3. Հավելյալ քարտը Հավելյալ հաշվետիրոջը տրամադրվում է միայն տպագիր տարբերակով՝ առձեռն:

2.4. Վիրտուալ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո Վիրտուալ քարտի տվյալները ենթակա են ոչնչացման Հաշվետիրոջ կողմից:

2.5. Հաշվետերը պարտավորվում է միջոցներ ձեռնարկել Վիրտուալ քարտի անվտանգությունն ապահովելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու համար:

### **3. Վիրտուալ քարտի օգտագործումը**

3.1. Վիրտուալ քարտը /հաշիվը/ բացվում է Վիրտուալ քարտով ինտերնետային միջավայրում կամ քարտի ֆիզիկական առկայությունը չպահանջող գործառնություններ իրականացնելու համար:

3.2. Հաշվետերն իրավունք չունի փոխանցել Վիրտուալ քարտի տվյալները այլ անձանց:

3.3. Վիրտուալ քարտը չի կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող գործարքների համար: Վիրտուալ քարտով գործառնությունների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկն իրավունք ունի, առանց Հաշվետիրոջը ծանուցելու, չթույլատրել գործարքը և/կամ բլոկավորել Վիրտուալ քարտը և/կամ հաշիվը: Բանկը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել Հաշվետիրոջից՝ նախքան համապատասխան գործառնության թույլատրումը:

3.4. Նախքան Վիրտուալ քարտով գործարք իրականացնելը՝ Հաշվետերը պետք է մանրամասն ծանոթանա տվյալ ինտերնետային կայքից գնումների կատարման, առաքման, գործարքի չեղյալացման, ապրանքների վերադարձման պայմաններին, կայքի կոնտակտային տվյալների առկայությանը:

3.5. Վիրտուալ քարտով գործարք իրականացնելիս Հաշվետերը պետք է օգտվի ճանաչված և հուսալի կայքերից, ինչպիսիք են Secure Sockets Layer (SSL) սերտիֆիկատ, Verified by Visa անվտանգության համակարգ և այլ անվտանգության համակարգեր ունեցող կայքերից: Վիրտուալ քարտի տվյալների արտահոսքի և/կամ չլիազորված օգտագործման համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

3.6. Վիրտուալ քարտով չի թույլատրվում կատարել այնպիսի վճարումներ, որոնց վերջնական հաստատման ժամանակ կարող է պահանջվել քարտի ֆիզիկական առկայությունը:

3.7. *Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքների հավաստագրման պահին գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Հավաստագրման ժամանակ կիրառվում են VISA-ի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ գործարքի հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը: Բացառություն են կազմում VISA վճարահաշվարկային համակարգի քարտերով Եվրոյով կատարված գործառնությունները/գործարքները, որոնց հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվան նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված Եվրոյի փոխարժեքը: Փոխարժեքների*

*տարբերության հետ կապված արժութային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:*

- 3.8. Հաշվետերը պարտավոր է պահպանել բոլոր վճարային փաստաթղթերը, կապված Վիրտուալ քարտով գործառնությունների հետ՝ մինչև Քարտային հաշվից քաղվածքի ստացումը, ստուգել քաղվածքում նշված գործարքները իրականում կատարված ծախսերի հետ և անհամապատասխանությունների առկայության դեպքում քաղվածքի ձևավորման պահից Պայմանագրով սահմանված ժամկետում հայտնել դրանց մասին Բանկին: Բանկն իրավունք ունի մերժել նշված ժամկետից ուշ ստացված բողոքները:
- 3.9. Վիրտուալ քարտով գործառնությունները պետք է իրականացվեն Վճարային սահմանաչափի սահմաններում: Վճարային սահմանաչափը գերազանցելու համար գանձվում է տույժ՝ սահմանաչափը գերազանցած գումարի նկատմամբ՝ համաձայն Սակագների և/կամ Պայմանագրի: Նշված դեպքում Վիրտուալ քարտը կարող է արգելափակվել մինչև պարտքի մարումը:
- 3.10. Պայմանագրի լուծման վերաբերյալ Հաշվետիրոջ գրավոր դիմումն ստանալու պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Բանկը դադարեցնում է Վիրտուալ քարտի սպասարկումը՝ մարելով Բանկի հանդեպ Հաշվետիրոջ ունեցած և սույն կետում նշված 45-օրյա ժամկետի ընթացքում ձևավորված պարտավորությունները՝ Բանկում Հաշվետիրոջ ունեցած հաշիվներին առկա գումարներից: Վիրտուալ քարտի սպասարկումը դադարեցնելուց հետո 45 (քառասունհինգ) օր անց Հաշվետիրոջ Վիրտուալ քարտը փակվում է, իսկ դրանում առկա միջոցները փոխանցվում Հաշվետիրոջ այլ բանկային հաշվին Սակագների համաձայն:
- Սույն կետում սահմանված դեպքում Հաշվին առկա բացասական մնացորդը ենթակա է վճարման Հաշվետիրոջ կողմից բացասական մնացորդը ձևավորվելու պահից 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում:
- 3.11. Պայմանագրի դադարեցման դեպքում Հաշվետերը շարունակում է պարտավորություն և պատասխանատվություն կրել այն գործարքների վճարման համար, որոնք կատարվել են նախքան Պայմանագրի դադարեցումը:
- 3.12. Բանկը պատասխանատվություն չի կրում առևտրային կետում Վիրտուալ քարտի /այդ թվում՝ գործողության ժամկետը լրացած Վիրտուալ քարտի/չսպասարկման կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Հաշվետիրոջն ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար:
- 3.13. Վիրտուալ քարտի չլիազորված օգտագործման կամ նման օգտագործման վտանգի դեպքում Հաշվետերը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին /ինդրելով արգելափակել Վիրտուալ քարտի օգտագործումը/ սույն Կանոնների 4.1 կետում նշված հեռախոսահամարներով: Մինչ սույն կետով նշված կարգով Բանկին ծանուցելու պահը Վիրտուալ քարտով կատարված գործարքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
- 3.14. Բանկը պատասխանատվություն չի կրում Վիրտուալ քարտի չլիազորված օգտագործման հետևանքով Հաշվետիրոջը պատճառված վնասների համար:

3.15. Ելնելով Յաշվետիրոջ շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ հաշվով 6 /վեց/ ամիս և ավել շրջանառություն չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միակողմանի սառեցնել հաշիվը և բլոկավորել Վիրտուալ քարտը՝ առանց այդ մասին Յաշվետիրոջը լրացուցիչ տեղեկացնելու, ինչը, սակայն, չի սահմանափակում Բանկի իրավունքը՝ իր հանդեպ Յաշվետիրոջ ունեցած վճարային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով համապատասխան գումարներ գանձել Յաշվետիրոջ հաշվից:

Վիրտուալ քարտը ապաբլոկավորվում, իսկ հաշիվն ապասառեցվում է, եթե.

- ✓ Յաշվետիրոջ կողմից համապատասխան դիմում է ներկայացվում Բանկ,
- ✓ Յաշվետերը համապատասխան հարցով զանգահարում է Բանկ՝ սույն Կանոնների 4.1 կետում նշված հեռախոսահամարով՝ հայտնելով իր Վիրտուալ քարտի տրամադրման դիմումում նշված գաղտնաբառը:

3.16. Բանկը հնարավորություն է ընձեռում Յաշվետիրոջը ստանալ իր Վիրտուալ քարտով կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS /կարճ/ հաղորդագրություններ՝ այդպիսով հնարավորինս կանխելով Վիրտուալ քարտի չլիազորված օգտագործումը:

Վերոնշյալ SMS հաղորդագրությունը ստանալուն պես Յաշվետերը պետք է հավաստիանա, որ գործարքը կատարվել է իր կամ իր կողմից լիազորված անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ:

Վիրտուալ քարտի չլիազորված օգտագործման դեպքում Յաշվետերը պարտավոր է տեղեկացնել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ին կամ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ին՝ զանգահարելով սույն Կանոնների 4.1 կետում նշված հեռախոսահամարներով՝ հայտնելով իր Վիրտուալ քարտի տրամադրման դիմումում նշված գաղտնաբառը:

3.17. Չլիազորված օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում Վիրտուալ քարտը շտապ բլոկավորվում է և Բանկը, Յաշվետիրոջ դիմումի հիման վրա, ուսումնասիրում է գործարքի մանրամասները և, անհրաժեշտության/հնարավորության դեպքում, սկսում գործարքի բողոքարկման գործընթացը:

#### **4. Վիրտուալ քարտի տվյալների կորուստը**

4.1. Վիրտուալ քարտի տվյալների կորստի /գողացվելու, տվյալների արտահոսքի, երրորդ անձին հայտնի դառնալու/ դեպքում, այն արգելափակելու համար Յաշվետերը պարտավոր է անմիջապես հայտնել այդ մասին՝ զանգահարելով հետևյալ հեռախոսահամարներով՝

4.1.1. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝ ներքոնշյալ հեռախոսահամարներով.

- ✓ Ժամը 9:00-18:00՝ (+37410) 511-210, 511-213,
- ✓ շուրջօրյա՝ (+37410) 545 514:

Բանավոր դիմումի ստացումից և Յաշվետիրոջ ինքնությունը ճշտելուց հետո Վիրտուալ քարտն արգելափակվում է:

4.1.2. «Արմենիան Քարդ» ՓԲԸ՝ (+37410) 440-380 հեռախոսահամարով՝ Բանկի ոչ աշխատանքային օրերին և ժամերին:

4.1.3. ուղարկելով պատշաճ գրավոր հաղորդագրություն (+37410) 511-212 ֆաքսով կամ card@conversebank.am էլ. հասցեով կամ ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Ընդ որում, Բանկը համարվում է Հաշվետիրոջ կողմից սույն կետով նշված միջոցներով ծանուցված՝ Բանկի կողմից Հաշվետիրոջ հաղորդագրության ստացման վերաբերյալ հավաստումը Հաշվետիրոջ կողմից ստանալու պահից:

4.2. Արգելափակումից հետո Վիրտուալ քարտի տպագիր տարբերակը հայտնաբերելու դեպքում Հաշվետերը պարտավոր է այդ մասին անհապաղ՝ ամենաուշը 1 /մեկ/ բանկային օրվա ընթացքում, տեղեկացնել Բանկին:

Վիրտուալ քարտի գործողությունը կարող է վերականգնվել արգելափակումից հանելու համար Սակագներով սահմանված վճարները Հաշվետիրոջից գանձելուց հետո:

### **5. Հաշվետիրոջ և Բանկի հաղորդակցումը**

5.1. Բանկի և Հաշվետիրոջ միջև փաստաթղթերի առաքումը (ներառյալ՝ Պայմանագրի, Կանոնների և Սակագների փոփոխությունների մասին Հաշվետիրոջը ծանուցելն ու Քարտային հաշվի քաղվածքները վերջինիս տրամադրելը) իրականացվում է Վիրտուալ քարտի տրամադրման դիմումում Հաշվետիրոջ նախընտրած եղանակով:

5.2. Եթե Բանկի և Հաշվետիրոջ միջև հաղորդակցումն իրականացվում է փոստային կապի միջոցով, Բանկը պատասխանատվություն չի կրում փաստաթղթերի հանձնման ուշացման կամ չհանձնման, ինչպես նաև բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման համար:

5.3. Եթե Վիրտուալ քարտը Հաշվետիրոջը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով, Բանկը պատասխանատվություն չի կրում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության բացահայտման համար:

5.4. Բանկն իրավունք ունի ձայնագրել Բանկի և Հաշվետիրոջ բանավոր հաղորդակցությունը, ներառյալ՝ հեռախոսային խոսակցությունները, ինչի համար Հաշվետերը սույնով տալիս է իր անվերապահ համաձայնությունը: Կատարված ձայնագրությունները ծառայում են ապացույց՝ հնարավոր տարաձայնությունների կարգավորման ժամանակ:

### **6. Հավելյալ վիրտուալ քարտ**

6.1. Հաշվետիրոջից ստացված հայտի հիման վրա Բանկը կարող է բացել մեկ կամ մի քանի Հավելյալ Վիզա վիրտուալ հաշիվ՝ Հաշվետիրոջ կողմից նախապես նշված անձանց անունով՝ Բանկին տրամադրելով հավելյալ հաշվետերերի վերաբերյալ հավաստի տեղեկություններ:

6.2. Հավելյալ վիրտուալ քարտը կարող է օգտագործվել միայն այն անձի կողմից, որի անունով այն բացվել է: Հավելյալ վիրտուալ քարտի տվյալները տրամադրվում են միայն առձեռն այն անձին, որի անունով այն բացվել է:

6.3. Հաշվետերը պարտավոր է ծանոթացնել հավելյալ հաշվետիրոջը՝ Վիրտուալ քարտի օգտագործման կանոններին և Պայմանագրի դրույթներին:

6.4. Հավելյալ վիրտուալ քարտի վրա տարածվում են սույն կանոնները:

6.5. Վիրտուալ քարտով կատարվող բոլոր գործարքների գումարները գանձվում են հաշվից:

Վիրտուալ քարտի փակման դեպքում փակվում են նաև Հավելյալ վիրտուալ քարտերը:

**6.6. Հավելյալ հաշվետիրոջ կողմից կատարված գործառնությունների, այդ թվում՝ Գերաճախսի համար պատասխանատվությունը կրում է Հաշվետերը:**